«Արտյոմ Ոսկանյան» ԱՁ
Հեռ. (044) 87 59 41
Հ/հ 1570004505915000
“Ամերիաբանկ” ՓԲԸ
ՀՎՀՀ 26778044

«Artyom Voskanyan» IE
Tel. (044) 87 59 41
S/A 1570004505915000
“Ameriabank” CJSC
TIN 26778044

Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության
Պետ. լիցենզիա ՔՊԼ-002374 տրված 11.12.2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-002374, 2-րդ դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՆՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

ՏՐՎԱԾ Է
2024-12-11, ԱՐՏՅՈՄ ՈՍԿԱՆՅԱՆ Ա/Ձ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ՉԱՐԵՆՑ ԹՂՄ., 13, 8 ԲՆ.

Գործողության ժամկետը՝ 11.12.2029թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, Վարդենիս ք. Լեռնագործների փողոց 1/1 շենք, թիվ 36 բնակարանին կից ինքնակամ իրականացված կցակառույցի տեխնիկական վիճակի գնահատման վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2025

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

«Արտյոմ Ոսկանյան» ԱՁ

տնօրեն _____ Ա. Ոսկանյան

«23» _____06_____2025թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, Վարդենիս ք. Լեռնագործների փողոց 1/1 շենք, թիվ 36 բնակարանին կից ինքնակամ իրականացված կցակառույցի տեխնիկական վիճակի գնահատման վերաբերյալ

Սույն եզրակացությունը տրվում է համաձայն «Արտյոմ Ոսկանյան» ԱՁ-ի և ՀՀ քաղաքացի Մխիթար Կարապետյանի միջև 19.06.2025թ. կնքված թիվ Ե-113/25 պայմանագրի:

Եզրակացություն տալու նպատակով «Արտյոմ Ոսկանյան» ԱՁ-ի կողմից (Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության Պետ. լիցենզիա ՔՊԼ-002374 տրված 11.12.2024թ.) կատարվել է ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, Վարդենիս ք. Լեռնագործների փողոց 1/1 շենք, թիվ 36 բնակարանին կից ինքնակամ իրականացված կցակառույցի ակնադիտական հետազննություն, չափագրման ու լուսանկարման աշխատանքներ:

Շինության ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումները

ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, Վարդենիս ք. Լեռնագործների փողոց 1/1 շենքը հինգ հարկանի 2.7մ հարկերի բարձրությամբ բազմաբնակարան բնակելի շենք է: Շենքը կառուցվել է 1980-ական թվականներին և հատակագծում ուղղանկյունաձև է: Այն տեղադրված է մեղմ թեքությամբ տեղանքում:



Նկ. 1 Շինության ճակատային տեսքերը

Շենքի կոնստրուկտիվ լուծումը տրված է կրող ու կապող երկայնական ու լայնական պատերով և միջհարկային ծածկի ու վերնածածկի հորիզոնական կոշտ սկավառակներով:

Շենքի կոնստրուկտիվ տարրերն ունեն հետևյալ բնութագրերը.

- Հիմքերը ժապավենային են, իրականացվել են խամքարաբետոնով:
- Պատերն իրականացվել են տուֆաքարերի «Միղիս» տիպի շարվածքով, ցեմենտավազային շաղախի կիրառմամբ և ունեն 50սմ հաստություն:
- Ծածկերն իրականացվել են հավաքովի երկաթբետոնե (ե/բ) կլորանցքավոր սալերով:
- Բարավորները միաձույլ ե/բ-ից են:
- Տանիքը լանջավոր է արտաքին անկազմակերպ ջրահեռացմամբ: Իրականացված է փայտյա ծպեղնային ու կավարամածային կոնստրուկցիաներով և ծածկված է մետաղական հարթ թերթերով մասամբ պոլիկարբոնատե հարթ թիթեղներով;
- Սալվածքն ասֆալտաբետոնից է, մասամբ բետոնից:

Հետազոտության արդյունքում պարզվել է.

1. ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, Վարդենիս ք. Լեռնագործների փողոց 1/1 շենք, թիվ 36 բնակարանը գտնվում է շենքի առաջին հարկում: Այդ բնակարանին կից, ինքնակամ իրականացվել է մեկ հարկանի, ուղղանկյունաձև հատակագծով, 26.4մ^2 ընդհանուր մակերեսով կցակառույց: Կցակառույցն իրականացված է կրող ու կապող երկայնական ու լայնական պատերով ու ծածկի հորիզոնական սկավառակով: Պատերն

իրականացված են կանոնավոր կտրվածքի տուֆաքարերի շարվածքով և ունեն 20-սմ հաստություն: Կցակառույցի ծածկը իրականացվել է թեթև մետաղե կոնստրուկցիաներից: Կցակառույցի տանիքը լանջավոր և ծածկված է մետաղական ալիքավոր թերթերով: Կցակառույցը շենքից բաժանված է շինարարական նստվածքային կարանով (դեֆորմացիոն կարանով):

2. Կցակառույցի կոնստրուկտիվ տարրերի փսասվածքներ, ձնախախտումներ, անթույլատրելի ճաքեր չկան: Բացակայում են հիմքերի անհավասարաչափ դեֆորմացիաների նշաններ: Կցակառույցի ընդհանուր կոնստրուկտիվ համակարգում չկա նրա շահագործման հուսալիության վրա ազդող փսասվածքներ և թերություններ:

3. Կցակառույցի իրականացումը բացասական ազդեցություն չի ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, Վարդենիս ք. Լեռնագործների փողոց 1/1 շենքի փաստացի տեխնիկական վիճակի և սեյսմակայունության վրա:

Շենքի երկաթբետոնե կոնստրուկցիաների բետոնի ամրության որոշումը գործիքային եղանակով

Շենքի երկաթբետոնե կոնստրուկցիաների բետոնի փաստացի ամրությունը որոշվել է չքայքայող եղանակով՝ «Շմիդտ-Համեր» սկլերոմետրի միջոցով (գործարանային համարը՝ 2P0003), ՀՀ տարածքում գործող ՀՍՏ ԵՆ 12504-2-2013 «Կոնստրուկցիաներում բետոնի փորձարկում. Մաս 2. Չքայքայող փորձարկումներ. Առաձգական հետդարձի չափի որոշում» ստանդարտի պահանջներին համապատասխան: Չափումներն իրականացվել են շենքի կրող ե/բ կոնստրուկցիաների վրա (ե/բ հիմնակմախքի սյուներ ու պարզունակներ), շենքի տարբեր առանցքներով (տես նկ. 2):

Ամփոփելով չքայքայող եղանակով շենքի երկաթբետոնե հիմնակմախքի (սյուներ, պարզունակներ, դիաֆրագմաներ և այլն) բետոնի փաստացի սեղմման ամրության որոշված արժեքները ստացել ենք, որ բետոնի սեղմման ամրության արժեքներն ընկած են 24-26ՄՊա սահմաններում, որը համապատասխանում է B20 դասի բետոնին և համարվում է բավարար ցուցանիշ այդ կոնստրուկցիաների համար:

Մետաղական ամրանների առկայությունը ստուգվեց PS-35 Ֆեռոդետեկտորի միջոցով:

Նկ. 2 Բետոնի փաստացի ամրության որոշման դրվագ

Հիմվելով հետազննության արդյունքերին եզրակացնում ենք.

1. Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 08.12.2009թ. թիվ 282-Ն և 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված հավելված N 1-ի՝ «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազոտման մեթոդական ցուցումների», ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, Վարդենիս ք. Լեռնագործների փողոց 1/1 շենք, թիվ 36 բնակարանին կից ինքնակամ իրականացված կցակառույցի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար (2-րդ աստիճան):

Կցակառույցը ենթակա է շահագործման:

Կատարողներ՝

Փորձագետ՝ **Ա. Ոսկանյան**